



«ԹՈՂ ՏԻՐԱՄԱՅՐԸ ՔԱՂՑՐՈՒԹՅԱՄԲ ԼՍԻ ԱՂՈԹՔԸ ՆՐԱ»

Այս բարեկամադրությամբ է նգրափակում Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը իր ընծայականը՝ Աստղիկ արեղա Արիստակեսյանի «Աստվածամայր» ժողովածուի առթիվ:

Խոկապես, երիտասարդ արեղա-քանաստեղի գորչությամբ Աստվածամայր ուղղված աղոթքի մրմունջ է, որ հայ հոգևորականը հայ հոգևոր տաղերգության ալիանդությամբ դիմում է Աստվածամոր բարեխսության: Սակայն այս մրմունջն ու աղերսը նպատակ չունի հեղինակի համար բարօրություն հայցել: Իր ժողովուրդին ծառայելու ասպարեզին կոչված երիտասարդ հոգևորականը հաղորդակից է սեփական ժողովորդի պատմության և ներկային, տագնապում է այսօրվա մարդու հույզերով, տեսնում է Աստուծո ամենամեծ պարզեին՝ մարդկային կյանքին սպառնացող վտանգը: Եվ Աստղիկ արեղան բարձրանում է իր անձնական կարիքներից վեր, բարեխսություն պաղատում

«Ոչ նրա համար, որ ինձ շնորհեն
ինչ ես եմ ուզում իմ կյանքի համար»,

այլ

«Որ դու ուղարկես աշխարհի մարդկանց
Համերաշխության մի փոքրիկ հատիկ,
Պարզամտության մի նշխար անանց,
Որ մարդիկ ժպտան իրարու բարի»:

Բանաստեղծը Տիրամորը խնդրում է՝ դառնություն ու վիշտ ճաշակած այս մոլոր աշխարհից խելք կուրության սաղմը, որ նա շուայրորեն սփորի իր բարության շողը, որպեսզի «վշտոտ սրտերը մոայ» ամոքվեն իրենց դատնություններից, մարդիկ կարողանան Աստվածամայր սիրով այրու մեկը միուսին, ներել իրար «Հաշտության մոր» միջոցով, և որ «խաղաղության մայրը»

ԱՍՈՉԻԿ

ԱՍՏՈՒԱԾԱՄԱՅՐ

Փ. Ա. Ռ Ի Զ

տարածի իր խաղաղության լույսը ողջ աշխարհի ու մարդկության վրա: Բանաստեղծական հնարքի տեսակետից հետաքրքրական է «Գիտե՞ս Մարիամ» քերթվածը, որ մեղինակը բարդ առ բարդ, գեղեցիկ ընդհանրացումներով կերպավորում է հայ ժողովորդի պատմության ընթացքը, «հավատքի տաճար» իր հայրենի հողի անսասանությամբ աղեցուն՝ Աստվածամորը դիմելով որպես «Մայր հայոց հողի», «մեր պատմության բոլոր դարերի չարչարյալ վկա»:

Ահա թե ինչու պետք է ձայնակցել Վեհափառ Հայրապետի ընծայական խոսքին՝

«Թող Տիրամայրը քաղցրությամբ լսի
աղոթքը նրա,
Որպես պատարագ հացի ու գինվո»:

Ավելացնեաք, որ հրատարակությունը ի-
րականացված է մեծ ճաշակով և բարե-
խղճությամբ: Գրքին յուրահատուկ հմայք
են տախու Հովհաննեան դպրոցի և հայ
անհայր Ակարիչների Տիրամորը նվիրված
բարձրաճաշակ և խորապես հայկական գե-
ղանկարները:

Մնում է հուսալ, որ հայր Սատոհիկի հոգու

արձագանքը կհարատևի, հետզինուն կր-
յուրենանա, կզգենու առավել կայուն գե-
ղագիտական խորք և մտածումի պայծա-
ռություն:

Արտատպում ենք «Մայր մեր», «Եթե»,
«Բոլոր մայրերը կուս են» և «Մայր իսա-
հաղության» քերթվածները առ ի ծանոթու-
թյուն և սպասում Սատոհիկ արեղա Արիս-
տակեսյանի նոր գրքերի:

ԵՐՎԱՆԴ ՄԵԼՔՈՆՅԱՆ

ԱՍՈՂԻԿ ԱԲԵՂԱ ԱՐԻՍՏԱԿԵՍՅԱՆ

ՄԱՅՐ ՄԵՐ

Մայր մեր
Որ մերկինս,
Որ երկնի բուրյան ծաղիկն ես արթուն,
Կապույտ խորանի լուսը շողակաթ,
Բարեխոս եղեր
Մեր հոգիներիմ՝ հոգով քո խնդուն:

Մայր մեր
Որ մերկինս,
Ամենազեղուն շունչդ տարածիր
Մեր երկրի վրա մեղմ ու հոգեթոռվ,
Փարսիր աշխարհին
Քո հոգով անծիր
Եվ անցիր խաղաղ
Տնե-տուն մերթոռվ:

Անցիր տնե-տուն և ափոի՞ր շոայլ,
Բարության շողը հուսերով լնցուն,
Որ կյանքում վշտու սրտերը մոայլ՝
Պայծառանալով դառնան զվարթուն:

Մայր մեր
Որ մերկինս,
Կարճիր սահմանը հեռավորության
Երկրի ու երկնի....,
Փրկության համար
Քո որդիների....:

